# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Gene Pulser Xcell Electroporation System | GenePulser Xcell | Bio-Rad | Մանրէների և խմորասնկերի էլեկտրոպորացիայի համակարգը նախատեսված է բակտերիաների և խմորասնկերի էլեկտրոպորացիայի համար, ինչպես նաև այլ այնպիսի կիրառությունների համար, որտեղ պահանջվում է բարձր լարման իմպուլսների կիրառություն փոքր ծավալներով նմուշների համար: Համակարգը ապահովում է ճշգրիտ և վերահսկվող էլեկտրական իմպուլսներ՝ գենետիկական նյութի արդյունավետ ներմուծման համար: Համակարգը ներառում է՝ • էլեկտրոպորացիայի հիմնական բլոկ, իմպուլսի կառավարման մոդուլ (Pulse Controller, PC module), կյուվետների խցիկ, լրակազմում ներառված են էլեկտրապորատորին համապատասխան 0.1 սմ և 0.2 սմ մանրէազերծ էլեկտրոպորացիոն կյուվետներ (յուրաքանչյուրից՝ 50 հատ)՝ համապատասխան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | շտատիվով Սարքը նախատեսված է բոլոր տեսակի պրոկարիոտ բջիջների և խմորասնկերի տրանսֆորմացիայի համար, համատեղելի է ցանկացած տեսակի էլեկտրոպորացիոն բուֆերի հետ, ունի նախապես սահմանված ծրագրեր՝ առավել տարածված բակտերիական և խմորասնկային բջիջների համար, ինչպես նաև ունի ճկուն և հարմար ծրագրավորման հնարավորություն: Էլեկտրոպորատորը աշխատում է էքսպոնենցիալ կամ քառակուսի ալիքաձև իմպուլսներով: Սարքը ապահովում է 10, 25 և 50 միկրոֆարադ ունակության ընտրության հնարավորություն, զուգահեռ միացման դիմադրությունը կարգավորվում է 50-1000 Օհմ միջակայքում, քայլերի բաժանումը 50 օհմ, ինչպես նաև առկա է անսահման դիմադրության (∞) ռեժիմ, որը ապահովում է էլեկտրական շղթայի ճկուն կառավարումը։ Սարքի անվտանգ և կայուն աշխատանքի համար սահմանված են նմուշի դիմադրության նվազագույն արժեքներ։ 200–2500 Վ լարման դեպքում նմուշի դիմադրությունը՝ 20 Օհմ, իսկ 2500–3000 վոլտ լարման դեպքում՝ 600 Օհմ։ Քառակուսի ալիքի ռեժիմում իմպուլսի տևողությունը կարգավորվում է 0.05-5 միլիվայրկյան միջակայքում՝ 0.05 միլիվայրկյան քայլով։ Հնարավոր է կիրառել մեկ կամ երկու իմպուլս, որոնց միջև նվազագույն ընդմիջումը կազմում է 5 վայրկյան։ Սարքավորումը մատակարարվում է համապատասխան 5-ական 0,1 և 0,2 սմ բացվածքով էլեկտրապորացիոն կյուվետների հետ միասին։ Փաթեթի լրակազմը պարունակում է 50-ական ստերիլ էլեկտրոպորացիոն կյուվետներ՝ 0.1 սմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | և 0.2 սմ էլեկտրոդների բացվածքով և դրանց համապատասխան շտատիվով։ Կյուվետները նախատեսված են էլեկտրապորացիոն համակարգերով մանրէային, խմորասնկերի և կաթնասունների բջիջների հետ օգտագործման համար։ Պատրաստված են բարձր էլեկտրադիմացկուն նյութից։ Կյուվետները կիրառելի են բակտերիաների և խմորասնկերի էլեկտրոպորացիայի համար։ Տեղադրումը իրականացվում է մատակարարի համապատասխան սերտիֆիկացված մասնագետի կողմից։ Համապատասխանում է միջազգային ISO9001 և ISO 13485 ստանդարտներին։ Ապրանքը նոր է, չօգտագործված և չի պարունակում օգտագործած կամ կիսամաշ դետալներ։ Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Էլեկտրապորացիայի համակարգը ներառում է 1 տարի երաշխիք սարքավորման տեղադրումից և աշխատանքային վիճակի բերելուց հետո։ Ապրանքը պետք է լինի առնվազն 2025թ արտադրության և մատակարարվի ապրանքին վերաբերող բոլոր փաստաթղթերի հետ միասին։ Առկա պետք է լինի արտադրողի հավաստագիր։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | |